Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2013 թ.
սեպտեմբերի 4 -ի N 776 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության նպատակի և գործառույթների գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի հիմնական նպատակն է ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման աշխատանքների համակարգումը և միջոցառումների իրականացման պատասխանատու պետական մարմինների (այսուհետ՝ պատասխանատու պետական մարմին) փոխհամաձայնեցված գործողությունների ապահովումը:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն աշխատակարգով:

4. Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) ծրագրի իրականացման և ամփոփման ընթացքում լիազոր մարմնին անհրաժեշտ աջակցության ապահովումը.

2) ծրագրի իրականացման ընթացքում պատասխանատու պետական մարմնին անհրաժեշտ աջակցության ապահովումը.

3) ծրագրի ճշգրտման և վերանայման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4) ծրագրի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունները մշակելը և ներկայացնելը:

5. Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելիս կարող է՝

1) հարցում կատարել և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, գիտական, միջազգային ու հասարակական կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) խորհրդակցական ձայնի իրավունքով հանձնաժողովի նիստերին հրավիրել պետական պաշտոնյաների, գիտական հաստատությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Նիստն իրավազոր է որոշումներ կայացնելու, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի նիստերը վարում է նրա ղեկավարը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամը՝ հանձնաժողովի ղեկավարի հանձնարարությամբ:

8. Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է գումարվել նրա ղեկավարի կամ անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

9. Հանձնաժողովի ղեկավարը՝

1) հրավիրում և անցկացնում է հանձնաժողովի նիստերը.

2) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

3) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամկետն ու վայրը.

4) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) կատարում է աշխատանքի բաշխում հանձնաժողովի անդամների միջև.

6) հանձնաժողովի աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, ներգրավում է մասնագետների, փորձագետների, կազմավորում է աշխատանքային խմբեր.

7) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների հետ հարաբերություններում.

8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի N 776 -Ա որոշմամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

10. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) հանձնաժողովի ղեկավարի բացակայության դեպքում, վերջինիս հանձնարարությամբ, վարում է հանձնաժողովի նիստը.

3) հանձնաժողովին է ներկայացնում տեղեկություն ծրագրում ընդգրկված միջոցառումների ընթացքի մասին.

4) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

5) հանձնաժողովի ղեկավարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություն հանձնաժողովի աշխատանքներին մասնագետների, փորձագետների ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ.

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի N 776-Ա որոշմամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

11. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութեր և կազմակերպում նյութերի տրամադրումը հանձնաժողովի անդամներին և նիստին հրավիրված անձանց.

2) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և դրանց հիման վրա կազմում որոշման նախագծեր.

3) հետևում է հանձնաժողովի որոշումների կատարման ընթացքին և դրա մասին զեկուցում հանձնաժողովի ղեկավարին.

4) հաշվառում է հանձնաժողովի որոշումները:

12. Պատասխանատու պետական մարմինը հանձնաժողովի անդամ հանդիսացող իր ներկայացուցչի փոփոխության դեպքում հնգօրյա ժամկետում տեղեկացնում է լիազոր մարմնին՝ առաջարկելով նոր թեկնածություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2013 թ.
սեպտեմբերի 4 -ի N 776 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Ասատրյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (հանձնաժողովի ղեկավար)
Տ. Սահակյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Մ. Մկրտչյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Քարամյան	- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ի. Դավթյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետի տեղակալ
Կ. Կույումջյան	- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ (համաձայնությամբ)
Գ. Հայրապետյան	- Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Վ. Ասատրյան	- «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության զարգացման և հետազոտությունների խմբի ղեկավար (համաձայնությամբ)
Մ. Հովսեփյան	- «Բազմազավակ մայրերի աջակցության միավորում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Վ. Բաբաջանյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ժողովրդագրության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ